№ 14 Հինգշաբթի Փետրվարի 6 — 1886 — Հինգշաբթի Փետրվարի 6 № 14

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվա՝ 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատչանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց ընկերութիւններ։ — ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Ներքին լուրեր։ —ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գիւղ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՅՈՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ընկերութիւնը մարդկային հասարակութեան մէջ այն միաքն ունի, որ անհատների միմեանց ընկերակցութեամբ կարելի է անհամեմատ աւելի շատ գործել, քան թէ կարող է և այժ ունի գործել ամեն մի անհատ ջոկ ջոկ։

Բայց եթէ ընկերութիւնը աւելի շատ է գործում քան թէ անհատը, եթէ անհատները ընկերանալով, միանալով մի ընկերութեան մէջ, աւելի շատ չեն անում, քան թէ կարող էին անել, եթէ ընկերներից իւրաքանչիւրը իրանց համար ջոկ ջոկ գործէին, այն ժամանակ, ճշմարիտ, չարժէ հիմնել ընկերութիւններ։

Մենք նորերումս արտատպեցինք մեր լրագրում մի լուր Վարշավայի մի լրագրից, որից երևում է թէ այդ քաղաքի բարեգործական ընկերութիւնը պահում է Վարշավայի մէջ 25 ձրի ընթերցարաններ։ Դուցէ Վարշավայի բարեգործական ընկերութիւնը շատ ուրիշ գործեր էլ է կատարում, բայց եթէ նա միայն բաւականանար այդ քսան և հինգ ձրի ընթերցարաններ պահելով, դա էլ կը լինէր մի գործ, որ բաւական կը լինէր ընկերութեան գոյութեան իրաւունքը արդարացնելու, քանի որ այսպիսի նշանաւոր գործ կարող է կատարել միմիայն մարդկանց մի ընկերութիւն և մատչելի չէ անհատներին, վեր է ջոկ ջոկ անհատների ոյժից։

Բայց մեր հայոց զանազան ընկերութիւնները ինչով են արդարացնում իրանց գոյութեան իրաւունքը, ի՞նչ առանձին բան են անում, ի՞նչ առանձին գործ են կատարում, որ անմատչելի լինէր անհատներին, վեր լինէր անհատների ոյժից։

Ի՞նչ է գործում Բազուի մարդասիրական ընկերութիւնը, որ նրա արածը ճշմարիտ աչքի ընկնէր և ստիպէր մեզ ասել. „Իրաւ լաւ բան է, որ մի ընկերութիւն ունենք, եթէ ոչ մեզանից ամեն մէկը, մասնաւոր անհատներս, երբէք այդքան գործ չէինք կարող կատարել“։

Ինչ առանձին գործ է կատարում զրքերի հրատարակութեան ընկերութիւնը։ Հրատարակում է տարվայ ընթացքում մի երկու գիրք, այն էլ այնպիսի գիրք, որ ոչ ոք չէ կարդում,—Մովսէս Խորենացի, կամ Սաֆֆանոս Ասողիկ։

Վերջապէս, ինչ գործ է կատարում մեր հռչակված հայոց բարեգործական ընկերութիւնը։ Ահագին աղմուկ անելուց, հազար անգամ անդամներին հաւաքելուց, այնպիսի ընդարձակ ծրագիր կազմելուց յետոյ, որի մէջ ամեն բան կար և միայն պակաս էր մի յօդուած՝ որով ընկերութիւնը իրաւունք է ձեռք բերում կովկասում և Անդրկովկասում երկաթուղիներ կառուցանելը,—ամեն բան դրանով վերջացաւ, որ ընկերութիւնը իր գոյութեան տարիների ընթացքում մի քանի ուսանողներին ամսական հինգ հինգ ռուբլի օժանդակութիւն է տալիս։ Դրա համար ճշմարիտ չարժէր հիմնել մի ընկերութիւն։

Եւ մեր մամուլի մէջ դանվում են դրողներ, որոնք մեղադրում են ազգը, թէ նա անտարբեր է, սառն է դէպի մեր ընկերութիւնների պահպանելու գործը։ Չը գիտենք ի՞նչ հիման վրա և ի՞նչ բանից դրդված պէտք է ժողովուրդը ոգևորված, յափշտակված կերպով պահպանի իր եղած ընկերութիւնները, երբ նրանցից առանձին օգուտ իր համար չէ տեսնում, զրեթէ ոչինչ շօշափելի արդիւնք չէ տեսնում նրանց բաղմաեայ գործունէութիւնից։ Ասում ենք գրեթէ ոչինչ, բայց կարող էինք ասել և կատարեալ պէս ոչինչ, որովհետև այն, ինչ որ անում են մեր ընկերութիւնները, իրանց բազմաթիւ անդամների հաւաքական ոյժերով,—դրա համար ճշմարիտ է, որ չարժէր հիմնել մեզանում ընկերութիւններ։

Իսկ ինչ է պատճառը, որ մեր ինտելիգենցիան չէ համակրում այդ տեսակ ընկերութիւններին, սառն է վերաբերվում նրանց։ Ի հարկէ ոչ թէ այն պատճառով, որ այդ ինտելիգենցիան շատ սրտի է առնում ազգի կարիքները, ու պարզ տեսնում է թէ ընկերութիւնները ոչինչ չեն անում,—այլ գլխաւորապէս այն պատճառով, որ նրանցից ամեն մէկը իրան երևակայում է մի իսկ մարդ, որ կարող է գործ կատարել, նրանցից ամեն մէկը չափից դուրս փառասէր է և, որ գլխաւորն է, անչափ ինքնահաւան։ Բայց տեսնելով թէ նորերին, նոր եկածներին, նոր ոյժերին երբէք չէ աջողվում ընտրվել ընկերութեան պատուաւոր պաշտօնների մէջ, համոզվելով, որ մեզանում ով որ մէկ անգամ ընտրվել է, միշտ էլ կը մնայ պինդ նստած իր տեղի վրա և երբէք հին ոյժերը չեն նորոգվում,—մեր ինքնահաւան ինտելիգենտները համոզվելով որ երբէք չեն ընտրվելու հների տեղը, սառչում են և դէպի ինքն գործը։

Ի հարկէ, եթէ իրանք ընտրվէին, կարելի է հաստատ ասել որ իրանք էլ ոչինչ չէին կատարի, կամ նոյնքան քիչ կը կատարէին, որքան կատարում են այժմեան մեր ընկերութիւնների վարիչները,—բայց դարձեալ ամեն մէկը նրանցից մտածում է. „եթէ ես ընտրված լինէի, շատ նշանաւոր գործեր կը կատարէի“։

Ընկերութիւնների, ընկերակցական սկզբունքների, մարդկանց հաւաքական ոյժի վրա հիմնված ձեռնարկութիւնների, մի խօսքով ընկերակցութիւնների նպատակն ու կոչումը մարդկային ամեն հասարակութեան մէջ ուրիշ բան չէ, եթէ ոչ կատարել այն, ինչ որ անզօր են կատարել անհատները։

Բայց, ձեռքը խղճի վրա դնելով, թող ցոյց տան մեզ մեր մի հատիկ ընկերութիւն որ ճշմարիտ արդարացներ իր գոյութեան նպատակն ու իրաւունքը, ապացուցանէր իր գործերով որ իր գոյութիւնը ապարդիւն չէ, ցոյց տար թէ ծառայում է իր կոչմանը և հասնում է իր մտադրված նպատակին,—կատարել այն, ինչ որ մատչելի չէ անհատներին, ինչ որ մատչելի է միմիայն անհատների ընկերակցութեանը։

Հաւաքել մի որ և է դրամագլուխ, դնել նրան բանկը շահեցնելու համար, յետոյ տարէնը մի գիրք հրատարակել, կամ երկու երեք ուսում առնող չքաւոր երիտասարդներին ամսական հինգ հինգ ռուբլի օժանդակութիւն տալ,—դա դեռ մի ընկերակցութեան կոչում ու նպատակ չէ կարող համարվել։

Այսքանը կատարելու համար՝ ամենևին հարկաւոր չէ խորհուրդ, խորհրդի նախագահ ու անդամներ, ընդհանուր ժողովի նախագահ, ընտրութիւններ, ճառախօսութիւններ, քուէարկութիւններ և այլն...

Անցեալ համարում մենք ասեցինք որ ամերիկացիք երկու լաւ յատկութիւններ ունեն, նախ՝ անմիջապէս օգուտ քաղել հասարակութեան ոգևորութիւնից դէպի գործը, երկրորդ՝ ամեն գործ սկսել փոքր չափերով։ Բայց ամերիկացիք գիտեն հասարակաց ոգևորութիւնը դէպի սկսած գործը վառ պահպանել գործի ամբողջ ընթացքի ժամանակ, ձեռնարկութեան ամբողջ գոյութեան ընթացքում։ Իսկ մենք գործը սկսելուն պէս հասարակութեան ոգևորութիւնը տեսնելով, էլ չափ ու սահման չը գիտենք մեր պլանների մէջ. քիչ է մնում մեր ծնվող ձեռնարկութիւնների ծրագիրներում մոցնէինք երկրից դէպի լուսինը երկաթուղի անցկացնելու նպատակը, սկսում ենք գործը անասելի լայն չափերով,—բայց հէնց որ մեր նպատակին հասանք, այն է ընտրվեցինք ընկերութեան նախագահ, խորհրդի անդամ,—այն ժամանակ մեր ամենատարրական պարտաւորութիւններն էլ ենք մոռանում, մեր դեկավարած հիմնարկութեան ամենասկզբնական, ամենապարտադիր կոչմանը (որի համար նա հիմնվել է) լրում չենք տալիս։

Եւ մեզանում ամեն բան այդպէս է սկըսվել և այդպէս է վերջացել. սկսվել է չափից դուրս մեծ դիրքով և վերջացել կատարեալ անաջողութեամբ։ Դրան թող վկայ լինեն մեր բոլոր գրական, բարեգործական և այլ ազգային ընկերութիւնները, մեր թատրօնական հռչակաւոր կոմիտեաը և այլն և այլն....

Ինչ է դրա պատճառը։ Պատճառը շատ հասարակ է. դէպի հասարակաց գործունէութիւնը մեր ազգի անպատրաստ լինելը և մեր հասարակական գործիչների ուղեղի թերի, մանկական մտաւոր զարգացումը։

Եւ այդ բոլորը տեսնելով, մարդ համոզվում է, որ կանգնած է մի մեծ զարդակութեան առջև, որ հայոց հասարակութեան անուն է կրում։

Մի անբնական, արուեստական, մի տեսակ տենդային եռանդով ամեն բանի ձեռք տալը, անպատրաստ ոյժերով ամեն գործ հրեշաւոր չափերով, ահագին դիրքով սկըսելը, այլ որ դա կաղմելով մի ստուար մարմին, լի կենսական ոյժերով, ունի իր արժանաւոր և թերի կողմերը, որ հարուստ նիւթ կարող է մատակարարել հետաքրքիր սիրողի համար։ Ուստի գիւղացուն իր յարաբերութիւններով աւելի մօտ կանգնած անձանց պարտականութիւն է, սիրելով գիւղացիներին, ամենայն համբերատարութեամբ հետազօտել դրանց կեանքը և չը համարել նրանց մի տեսակ մեզանից ստոր էակներ, որոնց անընդունակ համարելով որ և է միտք ըմբռնելու, աւելորդ գլխացաւանք և ժամավաճառութիւն են համարում նրանց հետ խօսելը։—Գիւղական հարցի մասին մենք շատ անգամ խօսած ենք «Մշակի» մէջ, թէ ինքնուրոյն յօդուածներ և թէ փոխադրութիւններ զետեղելով։ Այժմ էլ՝ վերանորոգված «Մշակի» միջոցաւ, ցանկանում եմ մի քանի խօսք ևս ասել գիւղական կեանքի մասին։ Դուցէ իմ այժմեան ասածներից լինեն կրկնութիւններ նախկին ասածների, սակայն ևս այդ անում եմ, հաւատացած լինելով որ կան ճշմարտութիւններ, որոնց հարկաւոր է ժամանակ առ ժամանակ կրկնել։

—

Իր յարաբերութիւններով գիւղացուն աւելի մօտ և նրա վրա անմիջապէս ազդեցութիւն ունենալ կարողացող անձը՝ քահանան է։ Ցարարդարաբար, մինչև ցայժմ, ըստ մեծի մասին գիւղական քահանաների պահանջը լրացել է որոշ գիւղի երիտասարդներով, որոնք բացի Աւետարան, ժամագիրք կարդալը և կրօնական խնդիրների մասին ունեցած ոչ բաւական տեղեկութիւնները՝ ուրիշ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂ

—

Ցարգելի ընթերցողներ, դուք սիրում էք գիւղը։ Պատահել է ձեզ քաղաքի աղմկայոյզ կեանքից, պատշաճաւորութեան սէդանտական ճնշումից, կեղծաւորների մանուածապատ, խորամանկ խօսքերից ու ձևերից, կոկողավիզ, հաստաղլուխ մեծատան չանթարձակ դէմքից, կաքերի խլացնող դղրդոցից յետոյ տեսնել գիւղը՝ իր անպաճոյճ, անարուեստ մերկութեան մէջ։ Տեսել էք գիւղացուն ամարային արևի կիզող ճառագայթների տակ՝ գերանդին ձեռին ոսկեգոյն ցորենն ու դարին հնձելիս, երբ նրա սևացած, փոշեառ դէմքից քրտինքի վտակներ են հոսում, երբ նրա հուժկու, ջլոտ բազուկը չափ առ չափ շարժուելով պատրաստում է անհրաժեշտ կենսական պտղը. մտածել էք արդեօք որ այդ ցնցոտիների մէջ կոլոլուած անձի տաժանական աշխատանքին ենք պարտական մենք՝ քաղաքացիներս, մեր բարեկեցութեամբ, մեր զուգուած, զարդարուած ճեմելով...։ Եւ երբ այդ բոլորը տեսել էք, միթէ պատկառանք չէք զգացած դէպի այդ յափտենական մշակը, չէ՞ չարժուած ձեզանում կարեկցական զգացմունք, երբ տեսել էք թէ ինչպէս այդ տանջանային աշխատանաց արդիւնքը, որպիսի հեշտութեամբ, գիւղացու տգիտութեան չնորհիւ, մտնում է վաչխառուների, զանազան բաղդախնդիր-պարապիտների ղրպանը, չէ՞ ճնշուել ձեր սիրտը՝ երբ տեսել էք հայ գիւղացու 12 զոյգ եղնեերով քաշ տուած ծանր, յամրաչարժ գութանը, ց՝նոյեան եղանակով մշակուող երկիրը, հացի կալսելու և այլն ձևերը՝ և այդ պատճառաւ անձրևների տակ հացի փտիլը, չէ՞ք ցանկացել տարածել դոցա մէջ երկրագործական սկզբունքներ՝ գիտութեան արդի հնարած միջոցներով։ Իսկ որպիսի աղդեցութիւն է գործում քաղաքը՝ շրջաբնակ գիւղացու վրա։ Գիւղացին՝ հեռու մնալով կրթութեան բարերար ազդեցութիւնից՝ և ծանօթանալով քաղաքի շռայլ կեցութեանը, յարաբերութիւն ունենալով ըստ մեծի մասին, քաղաքի հասարակութեան մրուրի (поддонки) հետ, համակվում է նոյն ձգտումներով, նոյն ստոր բնազդումներով։ Եւ ահա տեսնում էք որ գիւղացու նահապետական պարզութիւնը՝ հետզհետէ չքանում է, նրա բարք ու վարքը ապականվում է, նրա մէջ մտնում են ճշմարտասիրութեան փոխարէն՝ կեղծաւորութիւն, ազնուութեան փոխարէն—խարդախութիւն, ողջախոհ և ժուժկալ կեանքին՝ անառակութիւն, դէպի մեծերը ունեցած յարգանքի փոխարէն՝ ապերասան լրբութիւն և այլ դրանց նման ախտեր մտնելով գիւղական տարրի, այդ առողջ մարմնի մէջ, վարակելով նրան—հետզհետէ քայքայում են նրան և միթէ դա չարժէ որ և է ուշադրութեան, միթէ մենք ամենքս, կորստաբեր «ինձ ինչ» հիման վրա, ձեռքերս ծալած, լուռ հանդիսատեսներ պէտք է լինենք և չը մտածենք այդ կործանող ազդեցութեան առաջն առնելու համար։ Եւ որովհետև ոչինչ դարման հնարաւոր չէ՝ մինչև հիւանդի ախտերը ուսումնասիրելը, ուստի և հարկաւոր է որ գիւղացու հետ առընչութիւն ունեցող անձինք, ըստ չափու կարողութեան, աշխատէին ուսումնասիրել գիւղացու կեանքը, նրա կեանքում երևացող այս կամ այն երևոյթի պատճառները և դրանց համեմատ որոշէին միջոցներ։ Մեր՝ հայերիս մէջ, գիւղական կեանքի մասին յօդուածներ սկսեցին երևալ «Մշակի» մէջ՝ սրանից մի քանի տարի առաջ և այդ յօդուածների՝ հասարակութեան ընդունելուց, յայտնուեցաւ որ ընթերցող հասարակութիւնը ըմբռնել է այդ հարցի նշանաւորութիւնն ու ժամանակի յարմար լինելը։ Ի հարկէ մեզանում դեռ հաղարերորդ մասն անգամ չէ գրուած ինչ որ գրվում է այդ մասին Ռուսիայում, որտեղ նշանաւոր գրողներ ամբողջ կեանքը նուիրում են շինականի կենցաղավարութեան մասին տեղեկութիւններ հաւաքելով, որտեղ երկու սեռի ուսումնասէր անձինք, չը խորշելով «դեղջուկի» տգիտութիւնից, յանձն առնելով զանազան, այդպիսի պայմաններում անհրաժեշտ, զրկանքներ, ոմանք գիւղական ուսուցչի պաշտօնով, այլք՝ գործակատարների և այլն պաշտօնով՝ բնակվում են գիւղերում, ուսումնասիրում են գիւղացու կեանքը։ Սակայն «լաւ է ուշ, քան երբէք», «լաւ է սակաւ, քան ոչինչ», ուրախալի է գոնէ, որ մեզանում ևս բարձրացել է այդ կարիքի պահանջը, որ «գիւղացի» խօսքը այժմ շատերի ականջին չէ հնչում իբրև մի անուն, որի համանիշներն են՝ տգիտութիւն, կոպտութիւն, անթափանց խաւար հասկացողութիւններ, այլ որ դա կաղմելով մի ստուար մարմին, լի կենսական ոյժերով, ունի իր արժանաւոր և թերի կողմերը, որ հարուստ նիւթ կարող է մատակարարել հետաքրքիր սիրողի համար։ Ուստի գիւղացուն իր յարաբերութիւններով աւելի մօտ կանգնած անձանց պարտականութիւն է, սիրելով գիւղացիներին, ամենայն համբերատարութեամբ հետազօտել դրանց կեանքը և չը համարել նրանց մի տեսակ մեզանից ստոր էակներ, որոնց անընդունակ համարելով որ և է միտք ըմբռնելու, աւելորդ գլխացաւանք և ժամավաճառութիւն են համարում նրանց հետ խօսելը։—Գիւղական հարցի մասին մենք շատ անգամ խօսած ենք «Մշակի» մէջ, թէ ինքնուրոյն յօդուածներ և թէ փոխադրութիւններ զետեղելով։ Այժմ ևս՝ վերանորոգված «Մշակի» միջոցաւ, ցանկանում եմ մի քանի խօսք ևս ասել գիւղական կեանքի մասին։ Դուցէ իմ այժմեան ասածներից լինեն կրկնութիւններ նախկին ասածների, սակայն ևս այդ անում եմ, հաւատացած լինելով որ կան ճշմարտութիւններ, որոնց հարկաւոր է ժամանակ առ ժամանակ կրկնել։

—

Իր յարաբերութիւններով գիւղացուն աւելի մօտ և նրա վրա անմիջապէս ազդեցութիւն ունենալ կարողացող անձը՝ քահանան է։ Ցարարդարաբար, մինչև ցայժմ, ըստ մեծի մասին գիւղական քահանաների պահանջը լրացել է որոշ գիւղի երիտասարդներով, որոնք բացի Աւետարան, ժամագիրք կարդալը և կրօնական խնդիրների մասին ունեցած ոչ բաւական տեղեկութիւնները՝ ուրիշ

-ոտ ինչ-որ ինչ-որ ինչ-որ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեր թղթակիցը գրում է մեզ։ «Ուղարկելով նամակիս հետ մեր հայազգի հռչակաւոր նկարիչ Այվազովսկու նկարների կատալոգը, մատիտով նշան եմ դրել նկարները, որոնք արդէն ծախվել են։ Հանդիսում դրված 30 պատկերներից ծախվել են, ուրեմն, հետեւեալները։ 1. Արեգակի դուրս գալը, 2. Ցրապիզոնի շրջակայքում մի այգի, 3. Կրիմի հարաւային ծովեզրը, 4. Բույուկ-Լամբատ, Կրիմի հարաւային ծովեզրում, 5. Կա-Գօրա պալատը Վենեցիայում։ Իսկ Այվազովսկու հանդիսի ամենամեծ նկարը ներկայացնում է «Հերկուլանումի և Պոմպէյի կործանումն»։ Այդ բոլոր նկարները մեր հռչակաւոր նկարիչը պատրաստել է երկու տարվայ ընթացքում։ Ինքն Այվազովսկին, թէև 70 տարեկան ծերունի է, բայց զարմանալի առողջ և ժիր է։ Զարմանալի է, որ այդ հասակում նրա տաղանդը ամենևին չէ թուլացել»։

—

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ որ դեկտեմբերի վերջում այդտեղի հայ-ուսանողները ներկայացրին Սունդուկեանցի «Պէպո» կոմէդիան և Լերմոնտովի «Демонъ» գրուածքից մի քանի կենդանի պատկերներ։ Ներկայացմանը կային բազմաթիւ այցելուներ, որոնցից մեծ մասը ռուսներ էին, որոնք հետաքրքրվում էին թէ կովկասցիներով, թէ հայոց լեզուի հնչիւններով և թէ վերջապէս «լեզգինկա» պարով։

—

Երեւելի կոմպոզիտոր Անտոն Բուբինշտէյն մի շարք կոնցերտներով ծանօթացնում է այժմ մայրաքաղաքի հասարակութիւնը երաժշտութեան պատմութեան յաջորդական զարգացման հետ։ Ամեն շաբաթ օր նա ածում է Ս. Պետերբուրգում, իսկ չորեքշաբթի օրերը գնում է Մոսկվա։ Կիրակի օրերը Պետերբուրգում և հինգշաբթի օրերը Մոսկվայում նա անվարձ կոնցերտներ է տալիս։

—

«Новое Время» լրագիրը առաջարկել է տօնել այս տարի Այվազովսկու գործունէութեան 50 ամեայ յօբելեանը, որին մեր նկարիչը պատասխանել է, թէ դիտաւորութիւն չունի այս տարի տօնել իր յօբելեանը, քանի որ իր յիսնամեակը պէտք է լրանայ 1887 թվին։

—

ՂԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են։ «Բնակարանս պատուհանից տեսնում եմ, ինչպէս ամեն օր 2—3 հանդուցեալին տանում են դէպի գերեզման։ Բաւական է յիշել, որ Վաղարշապատը բաղկացած է (պաշտօնական թուականներին նայելով) 500—600 ծուխ բնակիչներից, որ հասկանանք թէ օրական երկու, երեք մեռնողներ որքան նշանաւոր կորուստ է մեր գիւղի համար։ Այդ մահացութեան գլխաւոր պատճառը այժմ այստեղ սիրող բկացան է, որ զոհ է տանում գլխաւորապէս անչափահասներին։ Յունվարի 26-ին, կիրակի օրը, ժողովուրդը խուռն բազմութեամբ դիմում է դէպի Շողակաթ վանքը և վանքի պարսպի մէջ հետեւեալ պատկերն է ներկայանում տեսնողին. եկեղեցու դռները բաց են, հինգ աստիճան ցրտին, մօտ 30 մարդ զրոյց են անում մէջը, իսկ դրսում, եկեղեցու գաւթում, 50—60 երեխաներ, որոնցից մի քանիսների շլինքը փաթաթված, առողջների հետ միասին խաղում են բաց օդում։ Վանքի չորս կողմը, խումբ-խումբ կանգնած են ծեր ու մանուկներ և երկու տեղ դրված ահագին կաթսաների մէջ ինչ որ եփում են։ Այդ բոլորի պատճառն այն է, որ գիւղում սիրում են տարափոխիկ հիւանդութիւններ, գլխաւորապէս բկացաւ և դրա համար ժողովուրդը երկոչկով է մատաղ արել, որպէս զի հիւանդութիւնները վերանան։ Ահա ինչ ողորմելի ազիտութեան մէջ են գտնվում այն գիւղի բնակիչները, որի կենտրոնում գտնվում է մեզ բարոյապէս լուսաւորող մայր-աթոռը։ Չը հասկանալ որ մատաղը, այդ հակաքրիստոնէական, բուն հեթանոսական սովորութիւնը ոչինչ չէ կարող աղդել բկացաւի անհետանալու վրա, չը հասկանալ որ հիւանդ երեխաներին առողջների հետ, այն էլ ցրտում, չփելով, միասին խաղացնելով, նշանակում է առողջներին էլ ենթարկել նոյն ախտին,—դա անսահման ազիտութիւն է։ Տգիտութիւն է նոյնպէս, որ ժողովուրդը աւելորդ է համարում դիմել բժշկներին, քանի որ մեզ մօտ և բժիշկներ կան և դեղատուն։ Երևի հաստատ համոզված են, որ ոչ ոք չէ կարող օգնել բացի մատաղից։ Բայց ինչ մատաղ... Կարծում էք դրանով աղքատներին, չքաւոր մի քանի ընտանիքներ կերակրեցին,—ոչ, իրանք մատաղարին, իրանք էլ կերան։ Բացի վաղարշապատից, լսում ենք որ բկացաւ կայ Օշականում, Մարգարի գիւղում, Աշտարակում, Իգդիրում և այլ տեղերում»։

—

Մեզ գրում են ԱՐՄԱՒԻՐԻՑ հետեւեալը, որ ցոյց է տալիս թէ Ռուսաստանի մի քանի տեղերում որքան անկարգութիւններ կան փոստատներում։ Արմաւիրի մեր բաժանորդներից մին, որին մենք ուղարկել ենք «Մշակի» այս տարվայ բոլոր համարները, առաջին 8 համարները չէ ստացել, այն ինչ նոյն համարները ստացել են բոլոր միւս բաժանորդները։ Բանից ինչ է դուրս գալիս։ Պարոնը երկար հարց ու փորձ անելուց յետոյ տեղեկանում է, որ մի քանի այլ պարոններ, որոնք իրանք խնայում են տարեկան 10 րուբլ տալ լրագիրը ստանալու համար, ընծայում են մի քանի կօպէկներ փոստատան ծառաներին, ստանում են նրանցից համարները, իսկ մեր բաժանորդը, որի անունով ուղարկվում է թերթը, ոչինչ չէ ստանում։

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ գրում են հետեւեալը, յունվարի 28-ից։ «Երկու շաբաթ է որ այստեղ այնպիսի սաստիկ քամի է անում, որ դուրս գալն անդամ անհնարին է։ Սաստիկ քամին տարել է մի քանի տների կտուրներ։ Այստեղ վաճառակաթեան լոյսի տալածումը և հեռանում։

Եւ այս պատճառով՝ գիւղացին մնալով տգէտ՝ զոհ և խաղալիք է դառնում զանազան բաղդախնդիրների ձեռքին։ Ամենայն ոք՝ համարելով գիւղացուն մի կաթնատու ոչխար և այլոց բարեկեցութեան համար ստեղծված մի էակ, ճգնում է օգուտ քաղել նրա պարզամտութիւնից, անփորձութիւնից։ Վայ այն գիւղացուն, որ անդուշութիւն, կամ աւելի ուղիղ ասած՝ դժբաղդութիւն է ունեցել որ և է պատճառաւ,—որդու ամուսնութեան թէ այլ բանի համար,—դրամ վերցնել վաշխառուից։ Հրէշաւոր տոկոսով վերցնելով այդպիսով դրամը, գիւղացին դառնում է վաշխառուի մշտական պարտավճարը. ամբողջ տարի նա աշխատում է բոլոր ընտանիքով և վճարում վաշխառուին, սակայն հաղիւ հազ կարողանում է վճարել տոկոսիքը, որ խորամանկ աշխարհակերի դատարում աճում է անընդհատ հետեւողականութեամբ։ Սակայն այդ դէպքում քաղաքացի պարտատէրը աւելի խղճմտաւոր է, համեմատաբար, քան գիւղոցի վաշխառուն։ Եթէ հաշուէք այդպիսիների առած տոկոսը և աւելացնէք դրա վրա գիւղացու, զանազան ժամանակ, իր պարտատիրոջ սիրաը կակղացնելու համար կատարած ձրի աշխատութիւնները,—դուք մի անհաւատալի թիւ կը ստանաք։ Այնուհետև՝ անվերջանալի վճարքը վնասեցնում է գիւղացուն, նա դիմում է հարբեցողութեան, գրաւ է դնում իր արտերը, ծախում է իր անասունները և այդպիսով մերկ, խեղճ, կորցրած մարդկային պատկեր թափառում է այս և այն տեղ, այն թռչունների նման, որոնց բունը աւերել էր որսորդի անողոք ձեռքը։

Գիւղացու համար մի տեսակ տզրուկներ են կազմում և նրանց մէջ գտնված օրէնսդէտ ձեռացող չարլատանները։ Այդպիսիք չեն սիրում գիւղական ծանր աշխատութիւնը, այլ այս և այն կողմ թափառելով, ուրուրի նման որս են որոնում և խլում նրան՝ իրանց ճանկերի մէջ։ Դրանք են բորբոքեցնում խռովութիւններ, կատարում են հաւատարմատարների դերեր կասկածաւոր գործերում, պատրաստում են վկաներ, մինչ բանիւ սարսափելի կորստաբեր աղդեցութիւն են գործում գիւղացու բարք ու վարքի վրա։— Ի թիւս գիւղացուն ճնշող հանգամանքների, հարկաւոր է յիշել և գիւղատէրերին։ Դրանցից ոմանք, ամբողջ աշունը յետաձգելով կալսելը, պատճառ են դառնում գիւղացու տարեկան աշխատանաց արդիւնքի փչանալուն։ Պակաս չեն և այնպիսի դէպքեր, երբ գիւղացու հացը մի քանի արտերում մնացվում է կամ առնամանիքից և այն ինչ գիւղացին տերը, ըստ ամենայն արդարութեան, պէտք է ստանայ հողի արտադրութիւնից՝ որտասանորդ ստանար հողի արտադրութիւնից՝ որպէս և լինէր նա, բայց գիւղատէրը չէ կամենում ստանալ, նրա համար հարկաւոր է մաքուր ցորեան, որ գիւղացին գնելով ստիպված է վճարել նրան։ Կան գիւղատէրեր, որոնք այժմ ևս, ինչպէս և սարկութեան անցեալ օրերին, միջամտում են գիւղացու զուտ ընտանեկան գործերին, ձրի ծառայութիւններ են անել տալիս, արդելում են խնջոյքների միջոցին դհոլ զուռնա ածելը առանց իրանց թոյլատրութեան...։

Ողորմելի գիւղացին իր տգիտութեան պատճառաւ ամենուրեք ստիպված է վճարել։ Ամենայն մի վէճ, կռիւ՝ ունենում է գիւղացու անտեսութեան համար աւերող ազդեցութիւն։ Հէնց որ նա, գիւղացին, դիմում է քաղաք դանդատուելու, և ահա զանազան սրտացաւներ հանդիպում են նրան, լսում են նրան տանջող իրողութիւնը, հաւատացնում են նրան որ իրանք ամենայն բան կը անօրինեն յօգուտ այդ անձի և փողերը առնելով ճանապարհ են ձգում, մի խնդրագիր տալով ձեռքը, որի կանոնաւոր և լօգիկաբար պատրաստելու վրա հոգ տանող եղած չէ։— Պետական լեզուի չը գիտենալը պատճառ է դառնում գիւղացու զանազան թշուառութիւններին։ Այդպիսի դէպքում նրա վիճակը կախված է լինում թարգմանողից, նրա՝ որ չափով լեզուները տիրապետելուց և որպէս իր պարտականութիւններին վերաբերուելուց։ Թարգմանների մասին վերջերս հարկաւոր էր համարված մի անօրէնութիւն անել և ցանկալի է որ այդ հարցը օր առաջ քննուէր և մարդիկ ազատուէին թարգմանների սխալման պատճառաւ հնարաւոր վտանգներից։

Վերջացնելով ներկայ յօդուածը, ես խոստանում եմ մի այլ անդամ աւելի մանրամասնօրէն խօսել այս բազմապարունակ հարցի մասին, իսկ առ այժմս կը ցանկայի որ հայ երիտասարդները ուսումնասիրելով այս հարցը, դրէին իրանց դիտողութիւնները և չարիքը խափանելու միջոցները։ Աւելի ձեռնտաս անձանց կը մնար այն ժամանակ այս նկարագիրներից (очеркъ) կազմել մի ամփոփ տեսութիւն հայ գիւղացու կեանքի, աւելի ընդարձակ չափով և մշակուած կերպով։ Իսկ մենք անենք այնքանը՝ որքան կարող ենք, ուրախ լինելով, եթէ մեր ընչին աշխատութիւնները մի օգուտ էին բերած մեր սիրած գործին։

Մ.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ մեր թղթակիցը գրում է մեզ։ «Մայիսի 1-ից քաղաքի ձիաքարշ երկաթուղիներից մի քանիսը դառնալու են շոգեշարժ երկաթուղիներ, ինչպէս Նորերումս արդէն վճռել է քաղաքային դուման։»

—

Փետրվարի 2-ին, կիրակի օր, ԹԻՖԼԻՍԻ ժողովարանում տուած պարահանդէսը յօգուտ հայոց Բարեգործական ընկերութեան, միայրեց մեր ժողովարանի դահլիճներում Թիֆլիսի գրէթէ ամբողջ հայ ինտելիգենտ և ունեւոր հասարակութեան երկու սեռի ներկայացուցիչներին։ Ինչ որ խելք, փող, դիրք ու գեղեցկութիւն ունենք,—բոլորն այդտեղ էր։ Կանանց հագուստների թատրամիւ էին չքեղ և չնորհալի հագուստներ։ Պարերը երկար շարունակվեցին։ Բացի հայերից բաւական թիւով ներկայ էին պարահանդէսին և երկու սեռի օտարազգի հիւրեր։ Որքան էր բալի արդիւնքը,—մեզ յայտնի չէ։ Այսքան կարող ենք ասել որ պարահանդիսին մասնակցողների թիւը բաւական մեծ էր երևում։ Պարահանդէսի կարգադրիչ սիրուհին՝ տիկին Կատարինէ Եանդուլեանն էր։

—

Կրկնում ենք որ այս տարվայ «Մշակի» յունվար ամսի համարները գրէթէ բոլորովին սպառված են բացի 2-դ, 10-դ և 11-դ համարներից։ Ուստի «Մշակին» բաժանորդ գրվել ցանկացողները կարող են այսուհետև գրվել փետրվար ամսից սկսած, վճարելով խմբագրութեանը 9 րուբլ, տարին և մէկ ամսվայ համար։

—

Մեր նախկին աշխատակից, հայ-կաթոլիկ երիտասարդ պ. Առաքել Սարուխանեան, որ «Մշակի» ընդմիջման ժամանակ աշխատակցում էր «Արձագանք» չաբաթաթերթին, ուղարկել է մեզ Նորերումս Արդանուշ քաղաքից հետեւեալ նամակը։ «Մեծ ուրախութեամբ ողջունում ենք «Մշակ» լրագրի վերսին նորոգումը, մի լրագիր, որ հեռի ամենայն կրօնական գոյներից, աշխատել է միշտ ընդհանուր հայութեան օգտին, կարեկցել է համազգային ցաւերին և դարմանիչ է եղել համայն հասարակութեան կարեաց,—նա ամենայն կերպով արժան է համակրութեան։ Մենք, հայ-կաթոլիկներս, եռանդագին ընդունում ենք «Մշակի» կըրկին երևումը հայկական մամուլի ասպարէզի վրա։ Այն ինչ որ չէ մտածել, կամ չէ կարողացել կատարել մինչև ցարդ ոչ մի հայ լրագիր, յաջողեցրել է «Մշակը»։ Դեռ ևս հայոց այլազաւան հասարակութիւնները չեն եղել կապված և սերտ միացած մի կենտրոնական զգացմունքով, չեն թողած իրանց կրօնական գոյնը, որ լոկ խղճի համոզման խնդիր է և վերաբերութիւն չունի ընդհանուր ազգայնութեան հետ կազմող նպատակի հետ, ձգտում չեն ունեցել անկեղծօրէն խառնվելու այն հաւաքական և միահամուռ հօտին, որ կոչվում է ազգ։ Եւ «Մշակը» այնքան առողջամիտ և առաջադէմ է գտնվել, որ իր չուրջը յաջողել է բոլորել բովանդակ այդ զանազանագոյն հօտի անդամներին։ Այդ միութեանը կարելի է միայն հատնել, ի բաց մերժելով հնօրեայ, խաւարամիտ ոգին, արմատախիլ անելով փոքրոգի անձնասիրութիւնը, որ այդքան խիստ ծիլեր է արձակած մեր սրտում։ Ահա միայն այս կէտը բաւական է «Մշակի» յարգը բարձրացնելու և նրան տալու իրաւամբ այն դիրքը, որին դեռ չէ արժանացել մեր լրագրութեան ոչ մի անդամակիցը։ Ես աւելորդ եմ համարում մի առ մի կրկնել «Մշակի» կատարած միւս դերերը հասարակաց բարօրութեան վերաբերութեամբ, միայն կրկնում եմ, որ մենք հայ-կաթոլիկներս ջերմ ընդունելութիւն ենք տալիս «Մշակի» վերանորոգման և ցանկանում ենք անկեղծ սրտով որ նա հաստատուն ընթացքով յարատեւէ իր առաջադէմ շաւղի մէջ, տարածելով և այլազաւան հայ հասարակութիւնների մէջ կրօնական համբերողութեան, ներողամտութեան բարձր ոգին, առաջնորդելով նոցա դէպի այն կէտ-նպատակը որ է ազգի մտաւոր և բարոյական վերանորոգումն, որին պէտք է ձգտեն ձեռք ձեռքի տուած առհասարակ թէ լուսաւորչական, թէ կաթոլիկ, թէ բողոքական և թէ մահմեդական հայերը և հարուածելով վնասակարը, ցոյց տալ մեզ եւրոպական քաղաքակրթութեան իսկական ներքին կազմուածքն ու արժանիքը, որով և առաջնորդել մեր դեռ ևս ասիական նեղ զգացմունքներով ապրող ամեն դատանութեան հայ ժողովուրդը։ Ուրեմն յաջողութիւն և յարատեւութիւն ընդհանուր հայութեան անկեղծ և հաստատակամ մշակին։»

—

ԹԻՖԼԻՍԻ հայ եկեղեցիների բարեկարգութեան վերատեսուչները խնդրում են մեզ հրատարակել, որ Օգոստափառ Թագաւոր Կայսրի գահակալութեան ծննդեամեակի պատճառով ժողովրդական պատգամաւորների ընտրութիւնը քաղաքիս եկեղեցիներում, որ նշանակված էր մարտի 2-ին, կը կատարվի նոյն ամսի 9-ին մեծ պասի երկրորդ կիրակի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գլադստոնի դատեր պապակի մասին լրագիրները հաղորդում են հետեւեալը. «Հանդէսը անցաւ. առանց որ և է արտաքին չքեղութեան, եթէ չը հաշուենք բարձրաստիճան անձանց ներկայութիւնը, որպէս Ուէլսի իշխանը և իշխանուհին, համայնքների ժողովի անդամներին և անգլիական արիստոկրատիան։ Միս Մէրիի հետ պակվեցաւ Դրիս

Գիտեմ որ ինձ ասելու են թէ ինչ գործ ունի գիտութիւնը մեր գիւղացու հետ։ Ինչ գործ ունի գիտութիւնը գիւղացու հետ, դա ուրիշ հարց է։ Գիտութիւնը չատ ընկած դրութեան մէջ է։ Առաջին հարկաւորութեան մթերքների գները հետեւեալն են, առաջին տեսակի հացի ֆունտը արժէ 4 կ., երկրորդը 3 կ., ոչխարի մսի ֆունտը արժէ 7 կ., տաւարինը 6 կոպէկ։»

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ մեր թղթակիցը գրում է մեզ։ «Մայիսի 1-ից քաղաքի ձիաքարշ երկաթուղիներից մի քանիսը դառնալու են շոգեշարժ երկաթուղիներ, ինչպէս Նորերումս արդէն վճռել է քաղաքային դուման։»

—

Փետրվարի 2-ին, կիրակի օր, ԹԻՖԼԻՍԻ ժողովարանում տուած պարահանդէսը յօգուտ հայոց Բարեգործական ընկերութեան, միայրեց մեր ժողովարանի դահլիճներում Թիֆլիսի գրէթէ ամբողջ հայ ինտելիգենտ և ունեւոր հասարակութեան երկու սեռի ներկայացուցիչներին։ Ինչ որ խելք, փող, դիրք ու գեղեցկութիւն ունենք,—բոլորն այդտեղ էր։ Կանանց հագուստների թատրամիւ էին չքեղ և չնորհալի հագուստներ։ Պարերը երկար շարունակվեցին։ Բացի հայերից բաւական թիւով ներկայ էին պարահանդէսին և երկու սեռի օտարազգի հիւրեր։ Որքան էր բալի արդիւնքը,—մեզ յայտնի չէ։ Այսքան կարող ենք ասել որ պարահանդիսին մասնակցողների թիւը բաւական մեծ էր երևում։ Պարահանդէսի կարգադրիչ սիրուհին՝ տիկին Կատարինէ Եանդուլեանն էր։

—

Կրկնում ենք որ այս տարվայ «Մշակի» յունվար ամսի համարները գրէթէ բոլորովին սպառված են բացի 2-դ, 10-դ և 11-դ համարներից։ Ուստի «Մշակին» բաժանորդ գրվել ցանկացողները կարող են այսուհետև գրվել փետրվար ամսից սկսած, վճարելով խմբագրութեանը 9 րուբլ, տարին և մէկ ամսվայ համար։

—

Մեր նախկին աշխատակից, հայ-կաթոլիկ երիտասարդ պ. Առաքել Սարուխանեան, որ «Մշակի» ընդմիջման ժամանակ աշխատակցում էր «Արձագանք» չաբաթաթերթին, ուղարկել է մեզ Նորերումս Արդանուշ քաղաքից հետեւեալ նամակը։ «Մեծ ուրախութեամբ ողջունում ենք «Մշակ» լրագրի վերսին նորոգումը, մի լրագիր, որ հեռի ամենայն կրօնական գոյներից, աշխատել է միշտ ընդհանուր հայութեան օգտին, կարեկցել է համազգային ցաւերին և դարմանիչ է եղել համայն հասարակութեան կարեաց,—նա ամենայն կերպով արժան է համակրութեան։ Մենք, հայ-կաթոլիկներս, եռանդագին ընդունում ենք «Մշակի» կըրկին երևումը հայկական մամուլի ասպարէզի վրա։ Այն ինչ որ չէ մտածել, կամ չէ կարողացել կատարել մինչև ցարդ ոչ մի հայ լրագիր, յաջողեցրել է «Մշակը»։ Դեռ ևս հայոց այլազաւան հասարակութիւնները չեն եղել կապված և սերտ միացած մի կենտրոնական զգացմունքով, չեն

թեան համար աւերող ազդեցութիւն։ Հէնց որ նա, գիւղացին, դիմում է քաղաք դանդատուելու, և ահա զանազան սրտացաւներ հանդիպում են նրան, լսում են նրան տանջող իրողութիւնը, հաւատացնում են նրան որ իրանք ամենայն բան կը անօրինեն յօգուտ այդ անձի և փողերը առնելով ճանապարհ են ձգում, մի խնդրագիր տալով ձեռքը, որի կանոնաւոր և լօգիկաբար պատրաստելու վրա հոգ տանող եղած չէ։— Պետական լեզուի չը գիտենալը պատճառ է դառնում գիւղացու զանազան թշուառութիւններին։ Այդպիսի դէպքում նրա վիճակը կախված է լինում թարգմանողից, նրա՝ որ չափով լեզուները տիրապետելուց և որպէս իր պարտականութիւններին վերաբերուելուց։ Թարգմանների մասին վերջերս հարկաւոր էր համարված մի անօրէնութիւն անել և ցանկալի է որ այդ հարցը օր առաջ քննուէր և մարդիկ ազատուէին թարգմանների սխալման պատճառաւ հնարաւոր վտանգներից։

Վերջացնելով ներկայ յօդուածը, ես խոստանում եմ մի այլ անդամ աւելի մանրամասնօրէն խօսել այս բազմապարունակ հարցի մասին, իսկ առ այժմս կը ցանկայի որ հայ երիտասարդները ուսումնասիրելով այս հարցը, դրէին իրանց դիտողութիւնները և չարիքը խափանելու միջոցները։ Աւելի ձեռնտաս անձանց կը մնար այն ժամանակ այս նկարագիրներից (очеркъ) կազմել մի ամփոփ տեսութիւն հայ գիւղացու կեանքի, աւելի ընդարձակ չափով և մշակուած կերպով։ Իսկ մենք անենք այնքանը՝ որքան կարող ենք, ուրախ լինելով, եթէ մեր ընչին աշխատութիւնները մի օգուտ էին բերած մեր սիրած գործին։

Մ.

քահանան։ Գլադստոնը ստորագրեց պապի թուղթը Ուէլսի իշխանից յետոյ առաջին մինիստրի տիտղոսով։ Հանդէսից առաջ և յետոյ աղմկալի ցոյցեր արին Գլադստոնին։ Նորասլակներին տըրված 200 ընծաներից հետաքրքիր է յիշել բուն գործնական ընծաները՝ 500 ֆունտ ստերլինգի մի չէկ, հոմէոպատիական դեղերով լի մի արկղ, 15 մատուցարաններ և տասը թանաքաման։

* *
*

Լրագիրները հաղորդում են, որ Անգլիական բիբլիական ընկերութիւնը անցեալ տարի տարածել է Ռուսաստանում 423,967 օրինակ սուրբ գիրք։ Վերոյիշեալ ընկերութիւնը Ռուսաստանում ունէր 38 գիրք մանածողներ և երկու ագենտներ՝ Ս. Պետերբուրգում Վ. Նիկոլսոն և Օդէսայում Մ. Մորիսոնը։

* *
*

Գերմանական կայսրուհին վերջին ինն տարիների ընթացքում չնորհում է ոսկեայ խաչեր իր ձեռքով ստորագրված վկայականի հետ միասին այն աղախիններին, որոնք մի և նոյն տեղը ծառայել են քառասուն տարի։ Այդպիսի խաչեր բաժանված են 1,268 հատ և ամենից շատ խաչեր չնորհված են Էլզաս-Լոտարինգիայի և Նասաու-Հէսսէնի կանանց։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 փետրվարի։ Այսօր Զերնոգորիայի իշխանը ուղևորվեց դէպի արտասահման իր բժշկի հետ միասին. մինչև սահմանը կուղեկցէ նրան կոմս Օրլով-Դենիսովը։ Մինչև երկաթուղու կայարանը ուղեկցեցին նրան մեծ իշխանները, բարձրագոյն աստիճանաւորները, Պեկո-Պավլովիչը և բժշկական ճեմարանի Զերնոգորցի ուսանողները։

ԼՕՆԴՕՆ, 3 փետրվարի։ Ժողովուրդը գրգռող չորս սոցիալիստները դատաստանի են ենթարկվում։

ԱԹԷՆՔ, 3 փետրվարի։ Նշանաւոր փողոցներում կպցրած են կենտրոնական յեղափոխական յանձնաժողովի յայտարարութիւնները, որ պարունակում են իրանց մէջ սպառնալիք կառավարութեան և թագաւորի դէմ, եթէ նրանք պատերազմ չեն սկսի։

ԼՕՆԴՕՆ, 4 փետրվարի։ Երէկ Բէյսվոթրում պարապ բանւորները անկարգութիւններ արին. ոստիկանութիւնը ցրվեց նրանց, բայց միշտ ոստի վրա պատրաստ ունեն հեծելազորքը։ Գրիվտ-Նորմանթում էլ ճնշված են անկարգութիւնները։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 4 փետրվարի։ Հաշտական բանակցութեան օրինագիծը, որ վերաբերում է սահմանների որոշելուն, ընդունված է։

ԲԵԼԳՐԱԴ, 4 փետրվարի։ Գերմանական, աւստրիական և անգլիական դեսպանները նոր առաջարկութիւններ արեցին հաշտական բանակցութիւններն արագացնելու համար։ Գարաչանին յայտարարեց, որ բանակցութիւնների ուշացնելում մեղաւորը Ցռնկաստանն է. Ռուսիայի դեսպանի առաջարկութիւնը, որ կայանում է բանակցութիւններից դուրս հանել Բերգովեան գործը, չընդունվեց գերմանական և այլ չատ ներկայացուցիչների կողմից։

ՄՈՍԿՎԱ, 4 փետրվարի։ «Московскія Вѣдомости» հաղորդում է, որ փետրվարի 2-ին Մոսկվայի կալուածական բանկի ակցիոներների ընդհանուր ժողովում կայացաւ հետևեալ վճիռը. մտցնել բանկի օրէնքներում այն բոլոր արտօնութիւնները բանկին վճարվող տոկոսների վերաբերութեամբ, որոնք տուած են պետական ազնուական կալուածական բանկի փոխառուներին, նոյնպէս որոշված է քչացնել փոխառուների վճարումների չափը գրաւ դրված կալուածներից մինչ 6% տարեկան, հաշվելով նրա հետ միասին պարբերի չիջումը։

ՍՕՖԻԱ, 4 փետրվարի։ Իշխանը և Կարավելովը ուղևորվեցին դէպի Ֆիլիպպօպոլ։

ԱԹԷՆՔ, 4 փետրվարի։ Սուլթանը բոլորովին չէ ուզում լսել Յունաստանին հողային զիջումներ անելու մասին և նախադասում է պատերազմը։ Յեղափոխական յայտարարութիւնները ոչինչ ներգործութիւն չունեցան ընակիչների վրա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի։ Հռօմի դեսպանութեան խորհրդատու Շեվիչը նշանակված է Եպարքոսի դեսպան։ Խարկովի նահանգապետ Իքսկուլ-Ֆոն-Գիլդենբանդտը նշանակվեց Պսկովի նահանգապետ։ Բ. Դրան վերջին շրջաբերականի պատճառով, որ վերաբերում է տաճկա-բուլգարական համաձայնութեանը, «Journal de St. Petersbourg» ասում է, որ նրա երկու կէտերի վրա դարձեալ կարելի է համաձայնութիւն կայացնել, որովհետև ինչպէս Բ. Դուռը համարում է արևելա-ռումէլիական գլխաւոր-նահանգապետի լիազօրութիւնը միայն ձևականութիւն, բայց Ռումէլիայի օրինագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու համար հարկաւոր է բոլոր պետութիւնների համաձայնութիւնը. իսկ բուլգարական զօրքի Սուլթանին ենթարկվելու հարցը չէ կարող ընդունվել։ Իսկզբ տեղը Բ. Դուռը հաստատում է, որ այդպիսի ենթարկութիւնը կախում ունի Սուլթանի բարձրագոյն իրաւունքներից. ընդհակառակն այդ բանը դէմ է միջազգային իրաւունքներին արևելքում։ Յունաստանին ենթակայ քրիստոնեայ պետութիւնները իրանց զօրքերին երբէք չէին ենթարկում Սուլթանի կարգադրութեանը։ Համաձայնութեան այս կէտը դէմ է նոյն իսկ Բերլինի դաշնագրութեանը և իշխան Ալէքսանդրը իրաւունք չունէ այդպիսի մի կապ հաստատել նոյն իսկ սկզբունքով։ Բուլգարական զօրքի Յունաստանին ենթարկելը ծանր հետևանքներ կարող է ունենալ. կը քանդէ խաղաղութիւնը արևելքում և կը յառաջացնէ եղբայրասպանական պատերազմներ։ Ոչ մի դէպքում Ռուսիան չի թոյլատրի, որ իր ձեռքով ազատված Բուլգարիան այդպիսի դեր խաղայ և եթէ այդ կարողացան մոռանալ Սոֆիայում, թող գիտենան որ այլ տեղերում լաւ յայտնի է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրվարի։ «Journal de St. Petersbourg» լրագիրը հերքում է Բելգրադից հաղորդած այն լուրը, որ իբր թէ Ռուսաստանի առաջարկութիւնը՝ հանել սերբо-բուլգարական խաղաղական բանակցութիւններից բրէգովեան գործը, չէ ընդունվել ուրիշ պետութիւնների ներկայացուցիչներից։ Ռուսաստանը, ընդհակառակն, խորհուրդ էր տալի մտցնել վերոյիշեալ գործը բանակցութիւնների պրոգրամայում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրվարի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգից ստացված մանաւոր տեղեկութիւնների համեմատ, փոխ-ծովապետ Կոզնակովի նաւատորմը երկու շաբթի օրը մտնելու է Կանդիա կղզուն։

ՄԵՐՈՒՉԱԿ, 5 փետրվարի։ Շուտով կը ժամանի այստեղ գեներալ Կոմարովը Պէնդինեան օգիստում ռուսաց վարչութիւն մտցնելու համար։ Մերուչակից մինչև Մայմէնէ եղած սահմանական տարածութեան գծագրումն չուտով վերջացրած կը լինի։

ԼՕՆԴՕՆ, 5 փետրվարի։ Լուրերին նայելով, Սուդի ծովածոցը բրիտանական էլի երկու նաւերի հասնելուց յետոյ, անյապաղ միջոցներ գործ կը դնվեն, որպէս զի արգելեն յունական նաւատորմին գործել Թիւրքիայի դէմ։

ԲԵԼԳՐԱԴ, 5 փետրվարի։ Երէկ պատգամաւորները ընդունեցին մի յօդուած, որով ներումն է չնորհվում սերբо-բուլգարական պատերազմի ժամանակ կատարած դիրք բռնող անձանց։

ՋԱՆԶԻԲԱՐ, 5 փետրվարի։ Ուգանդի թագաւորը հրամայեց կլխատել անգլիական միսիոնէր Գոննիգաուն եպիսկոպոսին և նրան ուղեկցող 50 մարդոց։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Փետրվարի 4-ին

Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ		$23^5/_8$ պէնս	
— — Համբուրգի վրա	—	$201^1/_8$ պֆ.	
— — Փարիզի վրա	—	—	—
Ոսկի — արժէ	—	8 ր.	33 կ.
Մաքսային կուպոններ արժեն . . .		8 »	33 »
Արծաթ — — — . . .		1 »	28 »
Բորսային դիսկոնտներ — . . .		$4^1/_2$ և 6%	
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի		99 ր.	50 կ.
— — — — 2-րդ —		99 »	62 »
— — — — 3-րդ —		99 »	— »
— — — — 4-րդ —		99 »	— »
— — — — 5-րդ —		99 »	37 »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.		99 »	37 »
— — 2-րդ —		99 »	37 »
— — 3-րդ —		99 »	62 »
Ներքին 5% առաջին փոխառութ.		228 »	50 »
— երկրորդ —		222 »	50 »
$5^1/_2$% բէնտա		102 »	75 »
Ոսկեայ բէնտա.		180 »	50 »
Նոր կոնսոլիդած փոխառութիւն. .		154 »	75 »
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		152 »	87 »
$5^1/_2$% գրաւական թղթեր Խերսոնի կալուած. բանկի.		94 »	75 »
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.		100 »	12 »
— — Պոլտավայի —	—	100 »	— »
— — Պետ. Տօլսկ. —	—	100 »	— »
— — Կիևի —	—	100 »	— »
— — Մոսկվայի —	—	100 »	50 »
— — Բեսարաբ. Տավր. —		99 »	50 »
— — Նիժ. Սամար.	—	100 »	— »
— — Վիլնայի	—	— »	— »
— — Թիֆլիսի — 27 և 43 տ.		94 »	12 »
— — Քութայիսի-18 և 43 տ.		93 »	50 »
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները		489 »	— »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		247 »	75 »
Ռիբինսկ-Վոլգովի ընկ.		81 »	— »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.		83 »	75 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .		92 »	— »
Օդէսայի — — .		91 »	12 »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը աւմուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОТКРЫТА ПОДПИСКА НА

„РУССКУЮ БИБЛІОТЕКУ.“

„РУССКАЯ БИБЛІОТЕКА“ состоитъ изъ **ДЕСЯТИ ТОМОВЪ** (болѣе 100 печатныхъ листовъ) и заключаетъ въ себѣ произведенія классическихъ писателей: **ПУШКИНА, ЖУКОВСКАГО, ЛЕРМОНТОВА, ГОГОЛЯ, ТУРГЕНЕВА, гр. Л. ТОЛСТАГО, ГРИБОѢДОВА, ГОНЧАРОВА, ОСТРОВСКАГО, ДОСТОЕВСКАГО, НЕКРАСОВА, КОЛЬЦОВА** и др. Каждый томъ заключаетъ біографію одного или двухъ писателей, портреты ихъ и лучшія произведенія въ систематическомъ порядкѣ.

ВСЕ ИЗДАНІЕ РОСКОШНО ИЛЛЮСТРИРОВАНО КАРТИНАМИ и ВИНЬЕТКАМИ.

„РУССКАЯ БИБЛІОТЕКА“ какъ обширная и роскошная христоматія, предназначается преимущественно для юношества. Она должна быть настольною книгой въ каждой школѣ и въ каждомъ домѣ, гдѣ есть подростающія дѣти. Въ послѣднее время получили значительное распространеніе дѣтскіе журналы, предлагающіе дѣтямъ искуственно принаровленные къ ихъ понятіямъ разсказы и научныя статьи большею частью мало извѣстныхъ или совсѣмъ неизвѣстныхъ писателей. Между тѣмъ, большинство дѣтей бываетъ незнакомо съ классическими русскими писателями, полныя собранія сочиненій которыхъ недоступны по цѣнѣ,—а на этихъ-то именно писателяхъ и должно-бы воспитываться подростающее поколѣніе, которое въ современныхъ книжкахъ, журналахъ и газетахъ не найдетъ выработанныхъ русскою жизнью и русскимъ геніемъ идеаловъ.

ЦѢНА „РУССКОЙ БИБЛІОТЕКИ“ СЪ ПЕРЕСЫЛКОЮ—8 РУБ.

Желая сдѣлать „РУССКУЮ БИБЛІОТЕКУ“ доступною для всѣхъ и дать ей самое широкое распространеніе, мы назначили за нее возможно душевую цѣну. Эта цѣна можетъ окупить иллюстрированное изданіе только при громадномъ количествѣ экземпляровъ.

Не желая идти вслѣдъ за изданіями, которыя даютъ своимъ подписчикамъ преміи-картины и признавая всю безполезность подобныхъ премій, контора „РУССКОЙ БИБЛІОТЕКИ“ предлагаетъ своимъ подписчикамъ, въ видѣ премій, прекрасныя и полезныя вещи, которыя могутъ служить лучшими подарками какъ для дѣтей, такъ и для взрослыхъ, въ особенности въ виду того, что въ провинціи нельзя доставать подобныхъ подарковъ. Всѣ эти вещи пріобрѣтены конторой „РУССКОЙ БИБЛІОТЕКИ“ отъ лучшихъ заграничныхъ фабрикъ въ громадномъ количествѣ и предлагаются подписчикамъ по самой дешевой цѣнѣ.

ПЯТНАДЦАТЪ ЦѢННЫХЪ ВЕЩЕЙ:

1) **ЧАСЫ КАРМАННЫЕ**, американскіе, изъ никкеля, съ вѣрн. ходомъ. 2) **ЧАСЫ КАБИНЕТНЫЕ** столовые, изящн. парижск. работы, съ вѣрн. ход. 3) **ВОЛШЕБНЫЙ ФОНАРЬ** съ картинами и печат. руководствомъ 4) **СТЕРЕОСКОПЪ** съ картинами. 5) **МИКРОСКОПЪ**, увеличивающ. до 500 разъ. 6) **ТЕАТРАЛЬНЫЙ БИНОКЛЬ** изящн. отдѣлки. 7) **КОМПАСЪ** въ футлярѣ. 8) **САМОУЧИТЕЛЬ РИСОВАНІЯ**. Ящикъ красокъ, кисти и печат. руководство. 9) **МУЗЫКАЛЬНАЯ МАШИНКА** (органчикъ). 10) **ГОТОВАЛЬНЯ**. Полн. приборъ для черченія. 11) **ПОДЗОРНАЯ ТРУБКА**. 12) **ЦѢПОЧКА ДЛЯ ЧАСОВЪ**. 13) **РОСКОШНЫЙ ВѢЕРЪ** парижск. раб. 14) **ДАМСКІЙ НЕССЕСЕРЪ** съ принадл. для рукодѣл. 15) **РОСКОШНЫЙ АЛЬБОМЪ**.

ПОДПИСНАЯ ЦѢНА: за 10 книгъ съ пересылкой **8 руб.**; за 10 книгъ съ двумя преміями, на выборъ, **16 руб.**, съ тремя преміями—**19 руб.**, съ четырьмя преміями—**22 руб.**, за дальнѣйшія преміи прибавляется по 3 рубля. Выписывающіе 10 книгъ и всѣ 15 премій высылаютъ **52 руб.** (съ пересылкой). Подписчики изъ Азіатск. Россіи и съ Кавказа прилагаютъ къ подписн. цѣнѣ 10%. Преміи безъ книгъ высылаются: часы по **7 руб.**, остальныя по **5 руб.**

ВЫШ. КНИГИ и ВСѢ ПРЕМІИ ВЫСЫЛАЮТСЯ СЪ ПЕРВОЙ ПОЧТОЙ.

Требованія адресуются: **въ Москву, въ контору „Русской Библіотеки“** (Петровка, д. Кредитнаго Общества).

2—3

ԹՈՇԼՏԻՒՊԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melauge. Մաղերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. գանգեայ և պապակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ որբվում երեսի քրտինքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կոսմէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։ Բերթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բալզամից, մաղերը պնդացնելու, խատցնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ., առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մաղերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիա-գուտմանի» գործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազին նում, «Վոլգա» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։

3—100.

„ԱՂԲԻՒՐ“

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻԿԱՑ 1886 Թ.

«ԱՂԲԻՒՐ» ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԻ

(ՏԱՐԷՆԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 12 ՀԱՄԱՐ)

Աղբիւրի» թէ ուղղութիւնը, թէ դիրքը մի և նոյնը կը մնան։ Միակ փոփոխութիւնը՝ աւելի «քեղ կը հրատարակուի։ Պրէմիաները կը լինեն աւելի մեծ և աւելի շքեղ։

„ԱՂԲԻՒՐԻ“ տարեկան բաժանորդագինը 3 բուբլի է, կէս տարվանը՝ 2 բուբլի, առանձին համարները 50 կոպէկ։

Հասցէն՝ Тифлисъ, редакція „Агбюръ“, իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal „AGBUR“.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Дозволено цензурою, Тифлисъ 5-го Февраля 1886 года. Типографія Канцеляріи Главнонач Гражд. час., Лорисъ-Меликовская у., д. кая.